ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԽՈՐԵՆ ՊԱԼՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԽՈՐԷՆ ՊԱԼԵԱՆ, ՈՐ ՅԵՐԵՒԱՆ

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնը, սէրն ու բարեմաղթանքները:

Ուրախութիւն է Մեզ համար գնահատանքի գիր ուղղել Ձեզ՝ հաւաստելով, որ բազում են Ձեր մատուցած ծառայութիւնները Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում:

Յարգարժան պրն Պալեան, երկար տարիներ ճանաչում ենք Ձեզ եւ ծանօթ ենք առ Աստուած հաւատով լեցուն Ձեր հոգու անկեղծ սիրուն ու նուիրումին՝ հանդէպ մեր Սուրբ Եկեղեցին: Պատանի հասակում ներգաղթելով Հայրենիք եւ ուսանելով Մայր Աթոռիս Հոգեւոր Ճեմարանում, Դուք Ձեր կեանքը կապեցիք Սուրբ Էջմիածնի առաքելութեան հետ:

Հոգու եւ մտքի Ձեր կարողութիւնները, երգելու աստուածպարգեւ մեծ շնորհը անմնացորդ կերպով ի սպաս էք դրել մեր ժողովրդի, Եկեղեցու եւ Հայրենիքի ծառայութեանը: Մեր ժողովրդի զաւակաց յիշողութեան մէջ տակաւին թարմ են Ձեր եւ Ձեր բարեյիշատակ Տիկնոջ՝ Լուսինէ Զաքարեանի հոգեւոր եւ ազգային երգերի անմոռաց կատարումները եկեղեցիներում ու տարբեր բեմերում, որոնք խորհրդային տարիներին հաւատի լոյսն էին զօրացնում հայորդեաց հոգիներում եւ սէրն առ հայրենին ու մեր մշակոյթը: Ձեր բարձրարուեստ կատարումներով հայ հնագոյն երգը իր անաղարտութեամբ ու գեղեցկութեամբ հնչել է ու տարփողուել նաեւ Սփիւռքի մեր գաղթօջախներում՝ ծանօթ ու սիրելի դառնալով Հայրենիքից հեռու ապրող հայորդեաց հոգիներին:

Դուք երկար տարիներ ղեկավարում էք Շողակաթ եկեղեցու դպրաց դասը՝ նախանձախնդրօրէն ու սիրառատ ոգով ջանքեր ներդնելով ծիսական արարողութեանց հանդիսաւորութեամբ ու պատշաճ վայելչութեամբ կատարմանը:

Մեծ եւ բազմարդիւն է Ձեր մանկավարժական վաստակը: Տասնամեակներ շարունակ Գրաբար եւ Հայոց լեզուի պատմութիւն էք դասաւանդում Երեւանի պետական համալսարանում եւ Շարականագիտութիւն ու Հոգեւոր երգ՝ Մայր Աթոռիս Գեւորգեան եւ Վազգէնեան հոգեւոր կրթօջախներում: Ձեր սաներին Դուք ոչ միայն գիտելիք էք փոխանցում, այլեւ ոգեշնչում նրանց Ձեր եկեղեցասիրութեամբ, Սուրբ Էջմիածնի հանդէպ որդիական նախանձախնդրութեամբ:

Ձեր ծառայութեանց ու վաստակի բարձր գնահատանքով եւ Գեւորգեան Հոգեւոր Ճեմարանի հիմնադրման 130-ամեայ յոբելեանի առիթով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու մաղթանքն է, որ Բարձրեալ Տէրը հանապազ զօրավիգ ու աջակից լինի Ձեզ՝ պարգեւելով քաջառողջ երկար կեանք, երջանկութիւն, նոր ներշնչանքներ եւ ազնիվ ու բարի գործոց մշտանորոգ յաջողութիւններ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 3-ն Նոյեմբերի
Ցամի Տեառն 2004 եւ ի թուին Հայոց ՌՆԾԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 271